# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 2

**« ՀՀ ԷԲՊՆ-2016-ՇՀԱՊՁԲ-11/1-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

30.05.2016թ.
ժամը՝ 10:00

**Մասնակցում էին՝**

**Հանձնաժողովի նախագահ՝**

*Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)*

աշխատակազմի ղեկավարի տեղակալ Էդ. Շախկյան:

**Անդամներ՝**

*Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)*

աշխատակազմի համակարգչային տեխնիկայի բաժնի պետ Հ.Մելիքյան:

աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի գլխավոր մասնագետ՝ Ն. Հակոբյան:

*Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)*

աշխատակազմի հաշվապահական հաշվառման գլխավոր մասնագետ Ա. Բաբուջյան:

աշխատակազմի քարտուղարության գլխավոր մասնագետ՝ Ա.Ջուլհակյան:

**Հանձնաժողովի քարտուղար՝**

*Գնման Պատասխանատու/Մրցույթի Համակարգող(ԳՊ/ՄՀՄ)*

աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ՝ Լ. Ադոնց:

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի գինը:

1. **Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին**

«ՀՀ ԷԲՊՆ-2016-ՇՀԱՊՁԲ-11/1-1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը էլեկտրոնային armeps.am համակարգի միջոցով բացվել են ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության շենքում, ք. Երևան, կառավար. տուն, մասն. 3 հասցեում, մայիսի 30-ին ժամը 10:00-ին:

2. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները /անունները/ և գտնվելու վայրերի հասցեները.**

| N/N | Մասնակցի անվանումը | Կազմակերպության էլ. փոստի հասցեն |
|---|---|---|
| 1 | <<ՖԼԵՇ>> ՍՊԸ | flashltdtender@gmail.com |
| 2 | <<ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն>> ՍՊԸ | cpsarmenia@gmail.com |

**3. Տվյալներ՝ ներկայացված հայտերը ԳՊ/ԲԱ-ի կողմից սահմանված կարգի պահանջներին համապատասխան բացելու մասին.**

3. «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

3.2 « ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն » ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը բացվել է, քանի որ ընդունվել էր համակարգի կողմից և ճանաչվել անցողիկ:

**4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին .**

4.1 «ՀՀ ԷԲՊՆ-2016-ՇՀԱՊՁԲ-11/1-1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի և «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

1) **Պիտանելիության չափորոշիչ՝**

ա) դիմում ՇՀ միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու մասին (Հավելված 1)

բ) հայտարարություն ՇՀ միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին (Հավելված 2):

2) **Տեխնիկական չափորոշիչ՝**

ա) հայտարարություն մասնագիտական փորձառության մասին (Հավելված 3.1)

բ) հայտարարություն տեխնիկական միջոցների մասին (Հավելված 3.3)

գ) հայտարարություն ֆինանսական միջոցների մասին (Հավելված 3.4)

դ) հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին (Հավելված 3.6)

ե) հայտարարություն առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ (Հավելված 4.1)

զ) հայտարարություն ԵՏՄ անդամ երկրների արտադրության ապրանքներ մատակարարելու վերաբերյալ (հավելված 4.2)

3) **Ֆինանսական չափորոշիչ՝** գնային առաջարկ (Հավելված 4):

«ՖԼԵՇ» ՍՊԸ-ի և «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

**5. Մասնակիցների առաջարկած գները.**

| Մասնակցի անվանումը | Չափման միավոր | Գնի առաջարկը /առանց ԱԱՀ/ /դրամ/ | Գնի առաջարկը / ԱԱՀ-ով/ /դրամ/ |
|---|---|---|---|
| <<Ֆլեշ>> ՍՊԸ | դրամ | 4125000 /չորս միլիոն հարյուր քսանհինգ/ | 4950000 /չորս միլիոն ինը հարյուր հիսուն հազար/ |
| <<ՍիՓիԷս Օիլ Քորփորեյշն >> ՍՊԸ | դրամ | 3781250 /երեք միլիոն յոթ հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր հիսուն/ | 4537500 /չորս միլիոն հինգ հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր / |

**6. Տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.**

Բանակցություններ չեն վարվել:

**7. Հանձնաժողովը որոշեց՝**

**1) 1.** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 46-րդ կետը՝ «ՖԼԵՇ» ՍՊԸ-ի և «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

**2.** Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետը, ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետը՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին, 2-րդ տեղ «ՖԼԵՇ» ՍՊԸ-ին:

**3.** Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2011թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը

ա)Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

բ) ծանուցել «ՍԻՓԻԷՍ Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացնել հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները**

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Էդ. Շախկյան | ........................ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Հ. Մելիքյան | ........................ |
| | Ն. Հակոբյան | ........................ |
| | Ա. Բաբուջյան | ........................ |
| | Ա. Ջուլհակյան | ........................ |
| Քարտուղար՝ | Լ. Ադոնց | ........................ |